

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**  
**ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**  
**ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ**  
**ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**N 15/12**

Քաղ. Երեւան

29 օգոստոսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. օգոստոսի 29-ի նիստում (արձանագրություն N 5.2) քննարկեց «Սիմոնյան կրթական հիմնադրամ» ընկերության կողմից 2012թ. հունիսի 29-ին ներկայացված «Թումո» (հայտի համարը 20111025) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոքը:

«Թումո» (հայտի համարը 20111025) համակցված ապրանքային նշանը չի գրանցվել 16-րդ, 35-րդ, 41-րդ և 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար, քանի որ համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ կետի 2-րդ «ա», 115-րդ կետի, 119-րդ կետի 1-ին ենթակետերի, ապրանքային նշանը չի կարող գրանցվել նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ գրանցված շփոթելու աստիճան նման ապրանքային նշանների առկայության պատճառով, իսկ Հայաստանի Հանրապետությունում «TUMO», «ԹՈՒՄՈ» («ԹՈՒՄՈ ԴԻՉԱՅՆ» ՍՊԸ, Երևան, Մոսկովյան 20, բն 46, հայտ N 20110981, 20110980, 20110979, գրանցման N 17939, 17938, 17937) ապրանքային նշանները ավելի վաղ առաջնությամբ գրանցված են:

Բողոքարկողը գտնում է, որ Գործակալության կողմից Հիմնադրամի անվամբ «ԹՈՒՄՈ» ապրանքային նշանի գրանցումը մասնակի մերժելը անհիմն է, դրանով խախտվել են Հիմնադրամի իրավունքներն ու օրինական շահերը, ուստի Որոշումը պետք է մասնակիորեն (թիվ 16-րդ, 35-րդ, 41-րդ և 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար «ԹՈՒՄՈ» ապրանքային նշանը չգրանցելու մասով) չեղյալ ճանաչվի և «ԹՈՒՄՈ» ապրանքային նշանը գրանցվի 16-րդ, 35-րդ, 41-րդ,

42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար «Սիմոնյան կրթական հիմնադրամ»-ի անունով:

Բողոքում արձանագրված է, որ Ընկերության կողմից ներկայացված ապրանքային նշանների և Հիմնադրամի կողմից ներկայացված «Թումո» ապրանքային նշանի շփոթություն առաջացնելու հանգամանքը հիմնավորվում է հենց Գործակալության կողմից Որոշման մեջ բերված փաստարկով առ այն, որ Գործակալությունը մասնակիորեն մերժելով Հիմնադրամի կողմից ներկայացված հայտը՝ վկայակոչել է հենց դրանք շփոթեցնելու աստիճան նման լինելու հանգամանքը (Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ): Բողոքարկողը պնդում է, որ Հիմնադրամի կողմից «Թումո» ապրանքային նշանն օգտագործվել է Ընկերության կողմից ներկայացված հայտի ամսաթվից՝ 10.08.2011 թվականից ավելի վաղ, որի վկայությունն է Հիմնադրամի կողմից էլեկտրոնային և տպագիր մամուլով, հեռուստատեսությամբ «Թումո» ապրանքային նշանի կիրառմամբ իր ծառայությունների առաջարկի վերաբերյալ գովազդելը կամ առաջարկելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1172-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապրանքային նշանի օգտագործում է համարվում՝ այդ ապրանքային նշանով մակնշված ապրանքների վաճառքի առաջարկը, դրանց վաճառքը կամ այդ նպատակով պահեստավորումը կամ այդ ապրանքային նշանով ծառայության մատուցումը կամ դրա առաջարկը (2-րդ մաս), այդ նիշի կիրառումը փաստաթղթերի վրա կամ գովազդի նպատակով (4-րդ մաս):

Բողոքարկողը պնդում է, որ «Թումո» ապրանքային նշանի օգտագործման մասին Ընկերությունը կարող էր իմանալ, քանի որ «Թումո» կենտրոնի (լրիվ անվանումը՝ Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի) մասին Հիմնադրամը տարբեր միջոցներով ու եղանակներով հրապարակայնորեն տեղեկացրել է հասարակությանը, իսկ այն, որ Ընկերությունն առարկել է Հիմնադրամի կողմից Գործակալություն ներկայացված հայտի դեմ և ինտերնետային կայքերից քաղվածք-ապացույցներ կցելով՝ իր առարկություններում նշել է, որ Հիմնադրամը շարունակաբար օգտագործել է Թումո ապրանքային նշանը և խնդրել է մերժել Հիմնադրամի կողմից ներկայացված հայտը, ապա դրանով հաստատվում է, որ Ընկերությունը միանշակ իմացել է Հիմնադրամի կողմից Թումո ապրանքային նշանը 10.08.2011 թվականից ավելի վաղ օգտագործելու փաստի մասին:

Բողոքարկողը գտնում է, որ Գործակալությունը ոչ թե պետք է Թումո ապրանքային նշանը Հիմնադրամի անվամբ գրանցել միայն թիվ 9-րդ, 28-րդ և 38-րդ դասերով, իսկ մնացած մասով գրանցումը մերժել, այլ նման պայմաններում պետք է մերժել «ԹՈՒՄՈ ՂԻԶԱՅՆ» Ընկերության ապրանքային նշանի գրանցումը թիվ 16-րդ, 35-րդ, 41-րդ, 42-րդ դասերով:

Բողոքարկողը պնդում է նաև, որ ընկերության կողմից «Թումո» ապրանքային նշանի հայտի մերժման հիմքերը առկա են եղել դեռևս դրա գրանցման պահից՝ 24.11.2011թ.-ից առաջ, սակայն,

Գործակալությունը «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» Ընկերության հայտը մերժելու փոխարեն մասնակիորեն մերժել է «Սիմոնյան կրթական հիմնադրամ» ընկերության հայտը: Հիմնադրամի կողմից ներկայացված հայտի գրանցման դեմ առարկություններ ներկայացնելով՝ Ընկերությունը դրան կցել է [www.news.am](http://www.news.am) կայքից կատարած քաղվածք, որը վերաբերվում է դեռևս 2011թ. հուլիսի 07-ին «Թոմո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում իրականացվող միջոցառումներին: Սա ուղղակիորեն նշանակում է, որ «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ընկերությունը առնվազն 2011թ հուլիսի 07-ին՝ իր կողմից հայտը ներկայացնելուց դեռևս մեկ ամիս առաջ, տեղյակ է եղել Թոմո ապրանքային նշանի օգտագործման մասին: ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից խախտվել են «Սիմոնյան կրթական հիմնադրամ» հիմնադրամի իրավունքները, քանի որ Գործակալությունը կարող էր և պարտավոր էր տեղյակ լինել վերը նշված փաստերի առկայության մասին:

Ամփոփելով իր բողոքը՝ բողոքարկողը խնդրում է Թիվ 20111025 հայտի հիման վրա ՀՀ մտավոր սեփականության գործակալության 29.12.2011թ. ապրանքային նշանը գրանցելու (մասնակի գրանցում) մասին Որոշումը մասնակիորեն՝ թիվ 16-րդ, 35-րդ, 41-րդ և 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար «ԹՈՒՄՈ» ապրանքային նշանը չգրանցելու մասով չեղյալ ճանաչել, և Սիմոնյան կրթական հիմնադրամի անվամբ «ԹՈՒՄՈ» ապրանքային նշանը գրանցել թիվ 16-րդ, 35-րդ, 41-րդ, 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար՝ վերջինիս կողմից ներկայացված հայտին համապատասխան:

Կոլեգիայի անդամը բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հունիսի 6-ին «Սիմոնյան կրթական» հիմնադրամի կողմից ներկայացվել է «ԹՈՒՄՈ» (հայտի համարը N 20111025) համակցված ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին փորձաքննության որոշման դեմ բողոք:

Կոլեգիայի անդամը համառոտ ներկայացրեց մերժման հիմքերը և բողոքի բովանդակությունը:

Նշեց նաև, որ բողոքարկողը Գործակալությանը խնդրել է չեղյալ ճանաչել «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ընկերության Գրանցման Որոշումները (N 17939, 17938, 17937 16-րդ, 35-րդ, 41-րդ, 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար), ինչպես նաև մասնակի չեղյալ ճանաչելով «Սիմոնյան կրթական հիմնադրամ» ընկերության գրանցման որոշումը, այն գրանցել 16-րդ, 35-րդ, 41-րդ և 42-րդ դասերի ապրանքների և ծառայությունների համար:

Կոլեգիայի անդամի կողմից նշվեց, որ «ԹՈՒՄՈ ԴԻԶԱՅՆ» ընկերության գրանցված ապրանքային նշանի վերաբերյալ Գործակալությունը չի կարող որոշում կայացնել, քանի որ համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 22-րդ և 23-րդ հոդվածների նման իրավասություն ունեն միայն դատական ատյանները, իսկ ինչ վերաբերում է «Սիմոնյան կրթական հիմնադրամ» ընկերության գրանցման որոշման փորձաքննության արդյունքների, ապա այս դեպքում իսկապես ապրանքային նշանները շփոթելու աստիճան նման են: Համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-

րդ հողվածի 1-ին մասի 2-րդ կետի, 2-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87-րդ կետի 2-րդ «ա», 115-րդ կետի, 119-րդ կետի 1-ին ենթակետերի, ապրանքային նշանը չի կարող գրանցվել նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ գրանցված շփոթելու աստիճան նման ապրանքային նշանի առկայության պատճառով:

Կոլեգիայի անդամը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց կոլեգիայի քննարկման արդյունքները:

Բողոքարկողը իր ելույթում պնդեց, որ գործակալության փորձաքննության բաժինը սխալ որոշում է կայացրել և նշեց, որ փորձագետները պետք է տեղեկացված լինեին «Սիմոնյան կրթական հիմնադրամ» ընկերության կողմից «Թումո» ապրանքային նշանի օգտագործման մասին:

Կոլեգիայի անդամ Ա. Խաչիկյանը ներկայացրեց, որ համաձայն «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 44-րդ հոդվածի հայտի հրապարակման թվականից հետո՝ երկամսյա ժամկետում, ցանկացած անձ կարող է հայտարկված ապրանքային նշանի գրանցման դեմ գրավոր առարկություն ներկայացնել պետական լիազոր մարմին, առարկելով, որ գրանցումը ենթակա է մերժման «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով սահմանված հիմքերով: Սակայն բողոքարկողը իմանալով հանդերձ, որ Գործակալություն ավելի վաղ առաջնությամբ հայտ է ներկայացվել, նման առարկությամբ չի դիմել, հետևաբար, գործակալությունը տեղեկացված չէր կարող լինել «Սիմոնյան կրթական հիմնադրամ»-ի ավելի վաղ գործունեության մասին և մերժման հիմք չի ունեցել: Բողոքարկողին տեղեկացվեց, որ ներկա փուլում, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային նշանը անվավեր է ճանաչվում, միայն դատարանի կողմից:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 2-րդ բողոքարկման խորհուրդը

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել «Սիմոնյան կրթական հիմնադրամ» ընկերության բողոքը և «Թումո» (հայտի համարը 20111025) համակցված ապրանքային նշանի գրանցման վերաբերյալ փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի  
նախագահ

Ա. Ազիզյան